ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

27.05.2020
345-46

Շիրակի պետական համալսարանի ռեկտորի
ժամանակավոր պաշտոնակատար
պարոն Երվանդ Սերոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սերոբյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել Շիրակի պետական համալսարանի դասախոս Գագիկ Համբարյանը, նշելով, որ 3.09.2019թ-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել ՇՊՀ ռեկտորին՝ խնդրելով տրամադրել համալսարանին առնչվող քաղաքական գործերից մեկով փաստաբանի ծառայությունների համար վճարված գումարի չափը: Համալսարանը պատասխան գրությամբ մերժել է տրամադրվել պահանջված տեղեկությունը՝ այն համարելով հրապարակման ոչ ենթակա անձնական տվյալ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համալսարանը ունի Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժին, ի՞նչ հիմնավորմամբ է Համալսարանը որոշում կայացրել ՇԴ/3107/02/19 քաղաքացիական գործով օգտվել փաստաբանական գրասենյակի և/կամ անհատ փաստաբանի ծառայություններից:
2. Հաշվի առնելով «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ ենթակետով բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում ամրագրված մրցութայնության, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքները, նշեք, խնդրում ենք, թե երբ և ինչ ընթացակարգով է ընտրվել այն կազմակերպությունը կամ փաստաբանը, որին պատվիրակվել է ՇԴ/3107/02/19 քաղաքացիական գործի ընթացքն ապահովելու ծառայությունը:
3. Տրամադրեք խնդրում ենք վերոնշյալ ծառայության պատվիրակման պայմաններին առնչվող փաստաթղթերը(եթե փաստաթղթերում առկա են հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ, ապա տրամադրեք փաստաթղթերի մնացած մասը):

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան